

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի, 2020 N 54

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության Պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի «Արցախի Հանրապետություն մուտք գործելու առանձնահատուկ և անհետանձգելի համարվող դեպքերը սահմանելու, Արցախի Հանրապետություն մուտք գործելիս և Արցախի Հանրապետության վարչական սահմաններում կիրառվող սահմանափակումների մասին» N 1 որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անցակետով թույլատրվում է Արցախի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այլ անձանց մուտքը Արցախի Հանրապետության տարածք:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ